ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ 32 ՀՈԴՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով այն հանգամանքից, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը դատավարության կողմերին հնարավորություն է տալիս ծանոթանալու գործի նյութերին, անելու քաղվածքներ, ներկայացնելու գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութեր, գրառել և ձայնագրել, ինչպես նաև, ՍԴ որոշմամբ՝ տեսագրել և հեռարձակել դատաքննության ընթացքը, իսկ օրենքի 58 հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ «Կողմերն իրավունք ունեն ծանոթանալու նիստի արձանագրությանը և ներկայացնելու իրենց դիտողությունները, որոնք կցվում են արձանագրությանը» և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 94-րդ հոդվածը, ըստ որի «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով»,

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 32 հոդվածը լրացնել 6-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ.

«6. Կողմի դիմումի առկայության դեպքում, օրենքի պահանջին համապատասխան, ՍԴ աշխատակազմը պարտավոր է կողմի համար ստեղծել բոլոր հնարավորությունները սահմանադրական դատարանում նիստի արձանագրությանը ծանոթանալու և կողմի դիտողությունները ներկայացնելու համար, որոնք կցվում են համապատասխան արձանագրությանը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

08 հուլիսի 2008 թվականի
ՍԴԱՈ-59